

ԱՐԵՎԷԼ

ՇԱԲԱՐԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏԱՐԻ ԹԻԻ 12

ՎԼԵԹ ՀՈԳՈՐԷՆ, ՕԴՈՍՏՈՍ 11 1888

ԳԻՆ 6 ՍԷՆԹ

Կ. ՊՕԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԽԱՆ ԸՆՏՐԵՆԵՐՆ

Թէև ազգային կեդրոնական իշխանութեան սահմաններէն շատ հեռի, սակայն իրը հոյ լրագիր՝ պատահանութիւն ունինք գիտել պահ մը Պոլսոյ այն ազգային գործերն որոց էր նային այսօր ամէն հայ աչքերը։ Օրումն սաք խնդիրն և խորին ուշադրութեան արժանի հարցն թէ՛ ի Պոլսոյ և թէ այլուր նոր պատրիարքի ընտրութիւնն է։ Համագումար ժողովն իւր ցանկն պատրաստած է և հինգ ընտրելիներն որոշուած են արդէն։ Այս վերջնոց մէն կոչում ունի բաւժլ ներսէսի աթոռն։ Սակայն գիտնալու բանն է սա թէ արդեօք սոցա մէջ կ'այ մէկը որ հանգուցնալ Պատրիարքին ալ ժանսուր յաջորդը լինելու արժանիքն ունենայ, և ասկէ զատ, արդեօք սոցսնէ աւելի արժանաւորութիւն, ժողովըզականութիւն ու այն փափուկ պաշտօնին յարմարութիւն ունեցող եկեղեցականներ չ'կ'ային մեր մէջ։ Ահա երկու կնճռոտ հարցեր, որոց առաջինն կը թողունք անոնց որք քիչ շատ տեղեկութիւն ունին ազգային ներքին գործոց վրայ։ Իսկ վերջնոյն ի պատասխան ամէն որ կրնայ ըսել թէ յիշեալ հինգ քանակաւ տներու մէկ երկուքն միայն պիտի կրնային մտնել խզի մտօք պատրաստուած ցուցակի մը մէջ։

Ազգի լնտրելին ամէն հայ կը վկայէ թէ իրիմասն հոյ յիշէր էր։ Նորա անուն պէտք էր երևէր յիշեալ ցանկին ճակոտն։ Նա կը ճանաչէ ազգի պէտքերն, գիտէ պաւտոններն, գիտէ կեդրոնն, ունի բոլորարեւութիւն Վեհ. Սուլթանի կառավարութեան հետ։ Նա ազգի ընտրելին էր կաթողիկոսութեան համար և վեր

ջապէս նա էր ազգի հայրիկն և պէտք էր վայելէր այն յարգանք գոր զաւան մը պարտի առ իւր Հօր։ Սոցա ամէն գիտնալով Գերձակեան մը գնել հնգանուան ցանկին մէջ և Քրիմեան դուրս թողուլ անտրամաբանական է յոյժ։ Այդ կարողութեան երբ վիճակ մը կառավարելու կարողութենէն զուրկ էր, ինչպէս կարելի է մտածել թէ պատրիարքական գահին վրայ բազմելու արժանիքն ունի այսօր։

Բայց ո՞վ կրնար մտանալ զնոր-Պէյ, ազգի այդ մեծ պարծանքն, լեզուագէտ, գրագէտ, քաղաքագէտ, գործօն և փոքր առաւ եպիսկոպոսն որ Ներսէսի կատարեալ վստահութիւնն կը վայելէր, և որ հնգանուան ցանկին մէջ տառաջակարգ տեղ մը պարտ էր բռնել։ Երկուսն ալ անունն բոլորովին դուրս մնացած կը տեսնենք։

Այդ կարելի է հետեցնել թէ յաջորդ ընտրութիւնն ալ դուցէ դո՛ւ չ'պիտի ընէ ազգն։ Եւ թէ սոց անգամ ալ ազգին ղեկը անկարողի մը ձեռաց մէջ պիտի դրուէր, ապա ուրեմն ինչ հարկ կար զնորութիւն պատրիարք երեսօղէ՞մ զբեկելու...

Սակայն եղածն եղած է, քանի որ հնգանուն ցանկն պատրաստուած է արդէն, ազգին կը մնայ միայն... մտղթիլ յերկնից որ գէթ դոցա մէջ ամէնէ արժանաւորն շահի ընտրող ձայներու մեծ մասը։ Տա՛ր երկինք որ ընտրողը համաձայնէին եզրկատուի կամ եզրկալոյ առաջնորդն բազմացնել այն աթոռին վրայ, որոյ փոշերն ու պահանջներն նորա կը ճանաչեն ի մտոյ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական ասպարէզն հանդարտ է, նըման այն միջնորդական խաղաղութեան որ զարհուրելի փոթորիկէ մը տառաջէր տիրէ երկրին վրայ: Երկու հակառակ կուսակցութիւններն մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնեն՝ ընտրի ատենաբաններ վարձելով քաղաքական խնդրոց վերայ ժողովուրդն լուսարանելու մոտք գրուած տեսարաններ հրատարակելով: Եւ իսկ տեղ ահագին մեծութեամբ դրօշակներ պարզելով որոց մեծ մասն նախադատական ընտրելիներու պատկերներովն: Աստիճակ և աստիճակ նման պատրաստութիւններ յառաջ կը տարուին ընդ փոյթ: Կամ թէ կուսակցութեանց դրամական վիճակներած նախաձեռնին մէջ՝ տարակուսելի նահանգաց քուէարկութեան գրաւելու ճիգեր կը լինեն, առատապէս վարձատրելով այն բոլոր քաղաքացիներն որք չէրք դիւրք մը բռնած են յանգչի կուսակցութեանց, կամ այն անձերն որք իրենց քուէներն վաճառելու խիղճ չեն ընեն՝ դրամական փոքր հատուցում մը ստանալով: Քաղաքական խնդրոց վրայ ատենախօսելն, որ տեղական լեզուաւ կը կոչեն «ընթերցիկ», կոկոխ սեպտեմբեր ամսոյ տառաջին օրերն և կաւարտի նոյեմբերի վերջերն, երբ քուէարկութեանց արդիւնքն կոր ոչ ընտրեալ անձանց վիճակը: Միայնալ նահանգաց մէջ օրինաց կարգն անցած է ամէն խնդրոց մասին գրաւ գնել, իրօք Ամերիկացին կրնանք ըսել գրաւ գնելու մէջ շատ յաջողակ է: Շահ թէ կորուստ հոգ չէ: Բաւական է որ իւր կարծիքը պաշտպանելու համար առաջարկած գրաւն ընդունող մի անձ գտնէ: Կ'երկի թէ նախադատական ընտրութեանց ժամանակ երկու կուսակցութեանց պարագլուխներու մէջ կատարուած գրաւներու գումարներն միլիոններու կը հասնին, և տեղի կուսեան հետեւալ կերպերով: Օրինակի համար. ռամկալարական մը գրամին ի ձեռին կ'առաջարկէ թէ իւր ընտրելին պիտի բազմի նախադատական օթոն՝ և գրաւ կը գնէ մէկի գէմ երկուք, երկուքի գէմ հինգ կամ տասը, ըստ խոսկական քաղաքականութեան և ընտրելի անձի արտատանած ատենախօսութեան կամ գըրաւոր պարգած սկզբունքի: Սոյն պայմաններով առաջարկուած գրաւն անմիջապէս կ'ընդունուի հանրապարականի մը կողմանէ և երկուքն ի միասին կը զիմեն երրորդ մի անձի որուն քով կը թողուն գրաւ գրուած ամբողջ ստակի գումարն: Նոյնպէս ալ հանրապարականն կրնայ, եթէ ուզէ, գնել մէկ տոլարի գէմ տասը տոլար, պիտի լինի թէ իւր ընտրե-

լին պիտի յաջողի: Բայց ամէնէ զուարճալի մասն գրաւ գնելու մէջ՝ դրամական գումար չէ, այլ բարոյական գրաւներն՝ որք յոյժ հըրահանգիչ և զարմանալի են: Օրինակի համար. վերջի օրեր մի անձ գրաւ կը գնէր թէ եթէ արդի նախադատն չ'վերջնորդուի, ինքն պատրաստ է իւր իսկ կինն վաճառել իբրեւ գերի: Սա կնոջ հաճութիւնն ստանալու մէջ ամենէին զգուարութիւն չ'կար, որովհետեւ կինն ալ վստահ էր թէ Պ. Նախադատն պիտի վերջնորդուի: Ուրիշ մէկը գրաւ գրած էր իւր հակառակորդն ուսերուն վրայ կրելով 15 մըն ճամբայ քուէլէ: Եւ իսկ մը գրաւ կը գնէր բոլոր կենաց մէջ շատ անհաշիւ երբեք, եթէ իւր ընտրելին չի բազմի նախադատական օթոնը: Ուրիշ մը գրաւ կը գնէ երեք ամիս ուր որ հանդիպի իւր հակառակորդին, փոխանակ խօսելու, չան պէս հաչէ ևն ևն: Մեկ նման փոքրիկ սահմանադեռական աղբի մը համար ամէնէ շահեկան կէտն սա պարագան է թէ ամերիկացոց նախադատական ընտրութեանց ժամանակ միտած գրամը անհաշուելի գումարներու կը հասնի: Իւրաքանչիւր կուսակցութիւն երկու միլիոն տոլար կը վատնէ իւր սկզբնայն ծառայելով քուէ շահելու համար որով միայն ձեռք կը բերուի բարձր թոշակաւ կառավարական պաշտօն մը, զի գիտենք արդէն թէ ամէն կուսակցութեանց նշանակեալ պաշտօնի եռանդն է, ոչ այլ ինչ, հակառակ այն հրապարակագիր Էֆէնտիներու կարծեաց որ քը կը պիտի թէ հայրենասիրական եռանդն է միայն տառաջնորդ կուսակցութեանց պէտքերու: Մենք կը պիտենք ինչ որ ուրիշ անգամ ալ ըսած ենք թէ հոս յաջողիկն իւրաքանչեւ է կողոպուտը: Ինչ և է, դառնանք մեր քաղաքական խնդրոյն: Այս տարուան ընտրութիւնք փոքր ինչ ազատ պիտի ըլլան անցեալ զգուարութիւններէ, սա պատճառաւ որ նախադատական օթոնոյն թեկնածու պարտնայք բարոյապէս և ընկերականապէս անբիծ անձինք են: արդի նախադատն խիղճ տէր մի անձնաւորութիւն եղած լինելը երեք ու կէս տարուան փորձերով հաստատեց: միւս կողմանէ հանրապարականաց ընտրելոյն համար ևս ամէն կողմանէ գովեստներ միայն կը լսուի և այս կերպով զէթ ընտրելեաց մաքուր բարոյականի տէր անձինք լինելը ընդունուած է ամէն կողմանէ: Կը մնայ խնդիրը ուղղակի կամ անուղղակի տրոց բարձման խնդրոյն վրայ որ սա չափ միայն կարող ենք գուշակել թէ իւր լուծումը պիտի ստանայ մաքուր տրոց վերայ կարեւոր գեղջ մը ընելով, և այս իսկ երկրին պահանջ, արդարութիւնը և տըրամբանական հետեւութիւնը հարիւրաւոր միլիոն տոլար գէղ գէղի վրայ ամբարեւն որ

տարիներէ ի վեր ժողովրդեան գրպաններէն
կը կորզուի տառնց պէտքի և առանց պատ-
ճառի, լոկ երեւակայական պատճառաբանու-
թեամբ, այնչափ ապօրէն որչափ անհիմն, այն
չափ անիրաւ, որչափ ապականիչ, չուայու-
թեանց առիթ, գեղծմանց հրապոյր և ընդհա-
նուր տնտեսական օրինաց հակառակ դուռ-
թիւն մը ելած լինելն անհերքելի ապացոյց-
ներով հաստատուած, և միայն կոյր կուսակ-
ցութիւնն է որ կը մերժէ հպատակիլ ժողո-
վրդեան կամաց ու փափաքանաց:

Կուսակցութեան մէջ քաղաքական պատե-
րազմը որչափ յառաջանայ, մեք մեր ընթեր-
ցողաց պիտի ծանօթացնենք տեղի ունեցած
այն ամէն կարեւոր խնդիրներն որոց վրայ կը
դառնայ ամէն ինչ:

ՀԱՆՐԱՎԱՐԱԿԱՆԱՑ ՓՈՒՆ - ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ
ԸՆՏՐԵԼԻՆ



ԼԷՎԻ Փ. ՄՕՐԹՍՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՄԵՐԻԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ

Թուրքիանակ Հայոց յԱմերիկայ գա-
թելն Օսմ. կառավարութեան կողմէն
արգելուած լինելն մեր ընթերցողք գի-
տեն անշուշտ. շատեր կը կարծեն թէ՝
Թուրքիոյ սահմաններէն անցելին է միայն
դժուար Ամերիկա գալու համար. այսու-
համաձայն տղ և սղ պատարուակներով կը
յաջողին դուրս ելլել հայրենի սահմաննե-
րէն առանց սակայն մոտակելու թէ՛ դժուար-
ութեանց մեծն հոս պահուած է իրենց
համար: Ուստի խիթրնի կառավարութիւնն
մասնաւոր ու շողորութիւն դառցուցած կե-
րեկ Հայ գաղթականաց վրայ:

Մուրացիկներու, գլամ և Ամերիկայի

մէջ աղքատիան չունեցողներու համար ար-
դէն արգելուած է մտնել յայտ աշխարհ. իսկ
Հայոց համար կարծես այս օրէնքն աւել-
ի խիստ է: Վերջի շարաթներն 20ի չափ
Քարբերդցի գաղթականք յաջողէր էին անց
նիլ Քասըլ-կարտընէն. իսկ շարթուս մէջ
եկող եօթն ուրիշ գաղթականներ դիւրամ
և Ամերիկայի մէջ բարեկամ չունեցած լի-
նելուն համար Ուօրտա-Այլընս փակուած
են՝ ետ խրկուելու համար: Սոցա մի քա-
նին Հիւսէյնիկ, միւսներ Քարբերդի ուրիշ
գիւղերէն եկած են Ուսթըր երթալու հա-
մար: Թէպէտե մի քանի անհամար շար-
թուս մէջ փորձեցին յիշեալ գաղթական-
ներն ազատել, բայց ցարգ եղած ամէն մի-
ջոց ի դերն ելան. և կը կարծուի թէ՛ զայնս
ազատելն անկարելի պիտի լինի, եթէ զս-
տահելի մի անձ առաջ չանցնի:

Թուի մեզ թէ յիշեալ եօթներն դուրս
հանելն կարեւոր բան մ'է: Արդարեւ մենք
դէմ ենք գաղթականաց բազմանալուն՝ ա-
ռանց սակայն դոցա լաւմանալովն մեր շու-
հու ապահովին հաշուի առնելու. ուս-
կայն քանի որ սա քանիներն իրենց տուն
ուղ վաճառած, կամ գրաւ գրած և կամ
պարտքով դրամ առած եկած են մինչ
հոս, պէտք է որ ներս առնուին, վասն զի
եթէ վերագառնալու լինին, իրենց բազմ-
անթութեան մեռնիլ միայն պիտի լինի:
Իսկ հոս դուքէ յաջողին իրենց հացն ձեռք
ձգել: Իսկ Հայոց յԱմերիկայ գաղթելու կե-
ցնելու համար սոցա ետ զրկուելն դաք մը
Նիւտտոններն կրնան վստահ լինել թէ այս
նորեկներուն քաջած ոյսչափ մեծ դժուար-
ութիւններն ալ բաւական դառ են հայ-
րենիք գանուողներուն համար:

Շարթուս մէջ հասնող Տիգրանուկերոս
ցի երկու ընտանիքներուն դէմ ու բաւա-
րան դժուարութիւններ յարուցած է Քա-
րբերդի յանձնաժողովն. վասն զի դա-
ցա ձէրդի Սիթիի մէջ ապրող քաղաքացի
անդամաց շահերն բաւական նկատած չէ
ապրուստ ճարելու համար. սակայն հուսկ
սերմն մեծ դժուարութեամբ կարելի ե-
ղած է զայնս առնել Գոլուպոսի երկիրը:

Ոյս դժուարութիւններն լսելով՝ կը
յուսանք թէ մեր Թուրքիանակ հոգե-
նակիցք գէթ այսուհետեւ՝ զգուշութեամբ
կը գործեն:

ԹԻԻ ՄԵՋԱՏԻՑ

Միջատից որոշ և նկարագրեալ տեսակներն թուով խիստ աւելի են քան երկրագնդոյս բոլոր կենդանիք։ այսինքն կաթնասունք, ձկունք, գիւղունք և այլք։ Կենդանարանք կը հաշուեն 55,000 տարրեր տեսակ կենդանիներուց ի միջատներէ։ Մինչև ցարդ արդէն ծանօթ թիւն անհուն է և նոր տեսակներ կ'աւելցուին միջատարանից ցանկին վրայ։

Որչափ մասնագէտք կը չտանան, որչափ հաւաքածուք կը կատարելագործուին և հետազոտութիւնք յառաջ կը տարուին, այնչափ նորանոր տեսակներ յառաջ կուգան, այնպէս որ յաճախ ամէնէն կարող և հմուտ կենդանարանից հանճարներն անբաւական կը լինին նոր տեսակներն նկարագրել, անուանել և դասակարգել։ Այսօր միայն Բրիտանական թանգարանին մէջ 15,000 տարրեր և որոշ տեսակ միջատներ կան զորս նկարագրել և դասակարգել անկարելի եղած է միջատարանից։ Նոյնը կը տեսնուի ամենամոտք միջատարանական հաւաքածոյից մէջ։ Մինչև իսկ սոյն ճիւղը ուսումնասիրող աշակերտն գրեթէ ամէն օր իւր ամսուանային միջատ որոտթեան ասեմ, կը հանդիպի միջատից տեսակներու զորս նկարագրել, թէ՛ մատեաններու և թէ՛ կարող դասաւորներու օգնութեամբ անհարելի կը լինի։ Ամէն ոք որ հետեւած է սոյն ճիւղի, գիտէ փորձառութեամբ։

Կէս դար առաջ միայն 70,000 տեսակ նկարագրուած էին և հին կենդանարանք կը խորհէին թէ առաւելուն միջատից ամբողջ տեսակներն սոյն թուոյն կրկնապատկէն աւելի կրնար լինել։

Սակայն անցեալ 30 տարուան գիտական մեծ յառաջադիմութեամբն սոյն թիւն հնգապատկած է և այսօր 350,000 որոշ տեսակներ արդէն նկարագրուած են։ Ի նկատի առնելով սոյն արագ աճումն, չափազանցութիւն չ'պիտի լինի ըսել թէ միջատներու տեսակներուն իրական թուոյն դեռ կէսը անծանօթ է աշխարհի։ Ներկայ գիտութեամբն և երկրագնդոյս մի ընդարձակ մասի անծանօթ լինելովն դեռ, բնագիտական տեսակետիւ, վստահարար կը հետեւցնենք թէ օր մը պիտի գայ երբ առնուազն մէկ միլիոն որոշ տեսակներ պիտի նկարագրուին։

Մէկ օրինակ մը ճիշտ հիմա առջեւ ունիմք քանի որ սոյն յօդուածը կը գրեմ։ Պըրթէ կէս գիշեր է։ Կեցածս սենեակը առանձին տան մը մէջ է ծառերով և արտե-

րով շրջապատեալ, պատուհանք մասամբ բաց են, ուստի և կանթեղին բոլորտիքն միջատք գրեթէ կը վխտան, ուստի թողուցի գրեւն և սկսայ միջատ որոտ։ Կէս ժամէն պակաս միջոցի մէջ այնչափ միջատ կրցի բռնել, որ թունաւոր տղակ հայ փոքր շիշն — գիտնալու է թէ սա շիշի մէջ միջատք դրուելէ վերջ զգրեթէ անմիջապէս կը մեռնին — լեցուեցաւ։ Մշտաւորի առջեւ ունիմք գրեթէ 25 տեսակ տարրեր միջատներ որք լոկ աչօք կրնան վանագնուիլ՝ առանց մանրագիտակի օգնութեան։ Սրգ սոյն միջատք ամբողջ կը վերաբերին «Պիշերայինք» կոչուած սեռին և ահա միայն շիշին աշխատութիւն մը 25 տարրեր տեսակներ երևան կը բերէ։ Թողունք տեսակներն այժմ և անցնինք անհատից, և եթէ շատ յառաջ երթանք այս մասին, այնպիսի անհուն թիւեր երևան կ'ելլեն զորս հաշուել կամ մինչ իսկ ընթեռնուլ ամէնէն հանճարեղ հաշուագէտին կարողութենէն վեր է։

Վերջերս մի քանի նշանաւոր միջատարաններ ուգեցին համբել կեռասենի մը վերայ եղած մի տեսակ ոջիւր որն որ ծանօթ է «Կեռասենի ոջիւր» անուամբ։ Մէկ կարգի մը մէջ եօթը մատղաշ կեռասենիներ կային որոնց իւրաքանչիւրն գրեթէ տասը սաք բարձրութիւն ունէր։ Նախ ճիւղերն և ապա մէն մի ճիւղի տերեւներն համուրելով՝ գտնուեցաւ թէ իւրաքանչիւր մատղաշ ծառ ունէր 17,000 տերեւ։ Շատ մը տերեւներ մանրագիտակի միջոցաւ քննելով հետեւցուցին թէ ամէն տերեւ ունէր առ նուազն 500—800 ոջիւր։ Սոյն թուոյն մէկ երրորդին չափ այլ ճիւղերու և ոտերու վրայ հաշուուեցաւ և ուստի ամէնէն ուշիմ և զգուշաւոր քննութեամբ գտնուեցաւ թէ իւրաքանչիւր մատղաշ կեռասենի ունէր իւր վերայ ոչ նուազ քան 12,500,000 ոջիւր։

Կենդանարանութեան ներկայ յառաջացեալ ուսումն գլխավորն անբաւական է բացատրել միջատից սոյն զարմանալի աճումն և մարդկային իմացականութիւնն կը կասի երբ կը ջանայ հասկնալ թէ ի՞նչ նպատակի համար ստեղծուած են միջատք այսպիսի անհուն բազմութեամբ։ Փոքրիկ ճանճիկերն կ'ըսուի թէ երբեմն անառններու մէջ այնպիսի անհամար միլիոններով կը գտնուին որ անկարելի կը լինի անցորդայ քայլ փոխել՝ առանց բերանին, քթերնին և ականջին ճանճերով և հանդերձնին իրապէս անոնցմով ծածկուած լինելու։

Ընթերցողաց ծանօթ օրինակ մէկ մարախըն որ իւր չուելու ասեմն կը ծածկէ արեւի լոյսը, ու կը լեցնէ օդը, որչափ որ աշայ

տեսութեան կրնայ հասնիլ :

Միէրրա նէվատա լերանց ամենարծր գաղաթէն, ճամբորդք ընտիր դիտակներով ո՛չ կրնային դաշտը տեսնել և ոչ խնկ վերի օդը սմանալիք : զի այդ անհուն պարտաւթիւնը լեցուած էր մարախով :

Հարաւային Միացեալ Նահանգաց հարուստ և պտղաբեր ընդարձակ երկիրներ անկարելի եղած է մշակել մեկինեւրո բազմութեան պատճառաւ : Բրիտանական Ամերիկայի մէկ ընդարձակ մասին վրայ ո՛չ մի խուզարկու կարող եղած է սաք կոխել այն շնչին միջատին բազմութեան պատճառաւ : մինչդեռ յարեւելեան եւրոպա և յԱսիա սոցա յարձակումն յաճախ խենթութիւն կը պատճառէ ճամբորդաց և մահ անթիւ ընտանի աւանանոց :

Յրանաացի նշանաւոր գիտնականին Րիօմիւրի փորձերն կը ցուցնեն թէ անհաս ռուսաստանի մը, մէկ սարուան մէջ իւր անընդհատ աճելովն և նոյն միջոցի մէջ իւր սերնդեան աճելովն կրնայ նախածնող լինել 5,904,900,000 անդամէ բաղկացեալ ընտանիքի մը :

Ահա այսպէս սոցն շնչին և աննշան միջատք, իւրեանց հազարն բազմութեամբ խիստ անհունա աւելի վնաս կը հասցունեն մարդկային սեօին, քան այն հոսիկու և ահաւելի վայրի գաղանք որք հազարաւոր պատիկ մեծ են քան զմիջատս : ուստի կուգանք կրկին կենդանաբանական այն առածին թէ՛ «Որչափ փոքր է կենդանին այնչափ մեծ է իւր վընտոր» կամ հասարակ ասացումն թէ «Որչափ պզտիկ այնչափ սաստիկ» :

Քօրնէլ Իւնիվէրսիթի Ա. Գ. ԱՍՏԻԿԵԱՆ
Իթ՛ՀԱՔԱ, Ն. Ե.

ԳԻՇՆԵՐ ՄԻ Ի Կ...

ՅԻՇԱՏԱԿ

Հոն՝ ուր նեղոս նիրիէ խաղաղ
Արմաւենեաց շուքին տակ,
Եւ ուր միայն հրծծեն նուաղ
Քաղցրաշունչ հովն ու ալեակ :
Գարնան գիշեր մ'էր գեղավճիտ,
—Ո՛հ դեռ յիշեմ գիշերն այն—
Երկինք տեղսր շող ու ժպտ՝
Ջրի, մարգի, ծաղիկ վրան :
Եւ որպէս կոյսն ի հայերոջ,
Լուսին՝ ծագած գեղալոյս,
Ձինջ գետին մէջ դիտէր դողող՝
Իւր պատկերը տրտեանոյշ...
Հոն՝ ի գետին էինք նստած՝
Յափշտակուած ու լռին :

Ներա աչքերն էին սուգած
Յանմանութիւնն այն խորին :
Մերթ դիտէր գետը կապուտակ
Ի'անծայրոթիր հորիզոն :
Մերթ երկին ջինջ եւ անյատակ :
Ձինջ որոնէր անդեօք եռն...
Այլ իմ աչկունքն էին յառած
Գէպ յայն երեշտակ սիրանուէր,
Գիտէի ես ներա աչաց
Գիւնիչ նայուածքն ու կայծեր :
Այն լոյս ծակասն՝ որ ծածկէին
Հոյլք հողմածուփ մազերուն
Եւ շրմունքներն, ոյց ըզձագին՝
Հպէր խաբուած խօլ մեղուն...
Եւ ներա գիրգ ձեռքն յիմ ի ձեռս,
Մտախոհ եւ լւորէն :

Միայն զնէ տեսնէի ես՝
Ձքնաղագեղ քան զամէն :
Ըսաւ մեղմիկ «Տես՝ եթ երին
կապուտագեղ եւ ջինջ գոյն,
Տես՝ ինչ անոյշ շողայ լուսին՝
Գեղեցկութեամբ փողփողուն :
Լսե՛ս ինչպէս Լովն ու ալիք
Եւ զովսփիւռ տերեւներ՝
Յանմանութիւնն այս խաղալիկ
Սփռեն տիտուր մրմունջներ...»

—«Այո՛, երկնի գոյնն այն կապոյտ
Գողտր է, ըսի շփոթեալ,
Այլ նա որչափ երեւի մութ՝
Աչերուդ քով մեծափայլ :
Եւ լուսինն է գեղածպիտ՝
Ձիւնամորմի ամպոց մէջ :
Այլ նա չունի անբիծ հապտիգ
Երազներն ու շողն անշէջ :
Մրմունջք ալեաց, տերեւներու
Մի նուագ են սրտագրու,
Այլ քու լեզուիդ մի խօսքն ազու
Գաշնակութիւն մ'է անբաւ...»
Եւ ի ծունր ի մարգագետին՝

Ակնապիշ իւր աչքերուն՝
Յաճախ շուրթերս քնքուշ ձեռքին,
Ո՛հ, կպեցան դողդոջուն...

Հոն՝ ուր նեղոս նիրիէ խաղաղ
Արմաւենեաց շուքին տակ
Եւ ուր միայն հրծծեն նուաղ՝
Քաղցրաշունչ հովն ու ալեակ :
Հոն այժմ աչքերս արցունք ցօղեն,
Սիրտս ալ միայն սգազգեաց,
Ձի այն սիրոյ ճեշտ ժամերէն
Լոկ յիշատակ մ'լնա մնաց...
Յուլիս, 1888 Կ. ԻՍԽԱՔԱՆԾ

Գա՛րիբ

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ պատրիարքական ընտրելիներու պատրաստուած հնգանուն ցանկն հետեւեալն է.

Դեր. Մատթէոս Եպիսկ. Իզմիրեան Առաջնորդ Եգիպտոսի.

Դեր. Խորէն Եպիսկ. Աշըքեան, Վանահայր Արմաշու.

Դեր. Խորէն Եպիսկ. Մոթիթարեան, Առաջնորդ Եդեսիոյ.

Դեր. Բարթողիմէոս Եպիս. Չամհեան Առաջնորդ Պրուսայի.

Դեր. Արիստակէս Եպիսկ. Դերձակեան, Առաջնորդ Կարնոյ.

Յաւուրի է յոյժ տեսնել թէ ազգի ընտրելիներն սա հնգանուն ցանկին մէջ անգամ մօտեւելու բարեբաղդութիւնն չեն ունեցած:

Աղէքոսանդրիոյ լրագիրք կը ծանուցանեն թէ Գերմանիոյ Կայսրն «Գերմանական թագաւոր աստեղագարդ պատուանշանի երկրորդ աստիճանն շնորհն է Վսեմ. Թագաւոր Փաշայ Յակոբեանի:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարի եղբայրն, Պ. Ա. Կիրս Էջմիածին այցելելով անսովորեան գնացած է Վերհ. Կաթողիկոսին, որուն հետ առանձնացած է բաւականատէս: Չգիտցուիր թէ ինչ է սա գաղտնի խօսակցութեան պատճառն:

Կը լսենք թէ վերջերս Խոթն Քարբերգի հայեր հասնելով ի Նիւ-Եօքք՝ դրամ և բարեկամ չունենալնուն համար՝ ետ պիտի ճամբուին քանի մը օրէն:

Շարթուս մէջ Տիգրանակերտէն տան և հնգի չոփ հայ գողթականներ հասան ի Ճէրզի Սիթի:

Ուսթըրէն կը գրեն մեզ

«Արեգակի էջերուն մէջ իւր իմաստալից յօդուածներով ծանօթ եղող մեր բարեկամներէն Ա. Աստիկեան Էֆ. համալսարանական յաջող քննութիւն մը անցնելէ վերջ՝ բիշմբ ժամանակ մեր մէջ անցնելու խորհրդով, քաղաքս ժամանեց մէկ քանի օր առաջ: Իւր արձակուրդի մէկ մասը՝ յուսով եմք թէ պիտի զոհէ անդոյս ազգայնոց ոմանց վարքն ու բարքը ուսումնասիրել, որպէս զի անդոյս հայոց ընկերական վիճակին վերայով լը բազրաց ոմանց սուած սուտ և սխալ տե-

ղեկութեանց շարքին վերջ մը տրուի մի անգամ ընդ միշտ: զի, ինչպէս որ յայտնի է, Կան պարագաներ որ անհանգուրթելի ըրած են բոլոր Հայոցս՝ ստամբակաց պիղծ շրթունք ներու արտադրութեանց յանդէպ լուռ մնալ:

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը փութամք ուղղել Արեգակի 11 թիւով հրատարակելու ձեզ հասած այն լուր թէ՝ «Երկու երիտասարդք ձերբակալուած են ի Նիւ-Եօքք, որոց միոյն անունն է Գ. Մ—եան Լայն: Յայտնի սխալ մէ այդ. Գաջ կը ճանչնամք Պրն. Գ. Մ—եան և իւր ընկեր. սոքա ոչ միայն ձերբակալեալ չեն, այլ և ձերբակալուելու անգամ տեղի սըռուած չեն ցարդ. հետեւորար լսի զրպարտութիւն մէ այդ, ոչ թէ իրողութիւն

Տ. Մ. Պ

Գ. Մ—եան անցեալներն մեզ գալով անձամբ հերքած է նոյն ձերբակալութեան խնդիրն, բոյց երկու երեք օր առաջ յիշեալն գաղտնի ոստիկաններու ձեռօք ձերբակալել տուած է իր ընկերն Պ. Ա. հայհոյութիւն մը ըրած լինելու յանցանքով:

ՆԵՐՔԻՆ

Հանրազարականաց Ընտրելի անցեալներն ատենախօսութեան մը մէջ ըրած է եղեր թէ գործաւորի մը օրականն մէկ տողաքէն աւելի լինելու չէ. Ռամկազարականք 1,000 տողար նուէր ունին այն մարդուն որ կարող լինի Հարիսընի այգալէս խօսած լինելն հաստատել:

—Ճէյ Կուլտ, Ամերիկայի մեծագոյն միլիոնատէրն անկողնոյ կը ծառայէ. հիւանդութիւնը բաւական երկիւղալից է կ'ըսեն: Եղուկ, այդ միլիոններ չեն կրնար առողջութիւն բերել:

—Միացեալ Նահանգաց գանձի մէջ պատրաստ կայ այժմ 710,409,510 տողար:

—Նախագահ Պ. Քըլիվլընտ, ամուսնոյն հետ միասին և այլ ձերմակ տան մի քանի պուշտօնեաներն մեկնած են Ուաշինկթընէ շրջագայելու համար: Սա շրջագայութեան պատճառն ձերմակ տան ջրի ամբարին վերանորոգուիլն էր:

—«Բնատնտարտ Օյլ Քըմբընի» մեծ ընկերութիւնն, որ ծանօթ է մեր ընթերցողներուն Լիմայէն, Օհայօ, մինչ Շիքսփօ ըստորերկեայ ճամբայ մը շինած է քարիւղի համար: Սա երկու վայրերու հեռաւորութիւնը է 206 մղոն: Սոյն հսկայ ճամբան լրացաւ շարթուս մէջ փորձը փոխանակ քարիւղի՝ ջրով անդի ունեցաւ ու ակնկալուած արգիւնքն տուաւ:

— Շարժում մէջ Պէլյն «Սիթի օֆ Նիւ-Եորք» նոր շոգենաւովն ողջամբ հասաւ, կոր ծուածէն քանի մը օր ուշ: Ընդունելութիւնն աննման եղաւ: Սան Ընթն շոգենաւն և այլ քանի մը մեծ լրագրաց շոգենաւներ երկայն ատեն սպասեցին ի Սանտի Հու Մէյնի քաղաքացւոյն համար որ հուսկ ուրեմն հասնելով մեծ ուրախութիւն պատճառեց իր բարեկամաց ու մեծ շարժում՝ բոլոր Միացեալ Նահանգներուն մէջ:

— 1884 տարուան նախագահական ընտրութեան ժամանակ երբ ընտրելի ներկայացուած անձանց ստացած քուէներու ցանկը հասկնէք, որպէս զի մեր ազգայինք աւիթ ունենան բաղդատել զայն յառաջիկայ ընտրութեան ժամանակ տրուելիք քուէներու հետ: Քլիվլենտ չահեցաւ 4,874,886 քուէ իսկ Պէլյն չահած էր 4,851,981 քուէ: առաւելութիւն Քլիվլենտի 23,905: Ասոնցմէ դուրս երկու հակառակորդք ևս կային որոց մին Զօր. Պըթլըր առաջաւ 273,570 քուէ և Սէն Ճօն անուն անձն 150,569 քուէ:

— Միացեալ Նահանգաց երեսփոխանական ժողովոյ անդամոց թիւն է 323 որոց 165 ը Տէմօքրատ, 152ն Րիփըվիքըն, 2ն գործաւորաց դասուն ներկայացուցիչք և 2ն ազատական են:

Մերակոյտի անդամոց թիւն է 76 որոց 39 հանրապարական և 37 աւանդականք: Յառաջիկայ ընտրութեան միջոցին երեսփոխանական ժողովոյ անդամոց աւագընդին քը ուէարկութիւն պիտի ըլլայ վերընտրութեամբ կամ նոր անդամոց ընտրութեամբ, իսկ ծերակոյտի անդամոց մէջն 13 հանրապարականաց և աւանդականաց համար քուէարկութիւնք պիտի կատարուին:

Երեսփոխանաց երթեւեկութեան համար կը վճարէ կեդրոնական կառավարութիւնը առաւելական 150 հազար տօլար, իսկ երեսփոխանաց համար հարկ եղած թուղթ և պահաւանի համար տարեկան 50 հազար տօլար: Փոնկրէսի մէջ եղած ատենախօսութեանց արձանագրութեան համար տարեկան 52 հազար տօլար ծախս կը վճարէ ելեմտական նախարարութիւնը: Սոյն պաշտօնի համար 12 սղաքի բրիտանացիներ յատկացեալ են տարեկան մօտաւոր և բարձր թոշակաւ որուն ընդհանուր գումարն 45 հազար տօլարէ աւելի է:

— Միացեալ Նահանգաց նախագահն կ'ստանայ տարեկան 50,000 տօլար: ներքին գործոց, ելեմտից, պատերազմական, թղթատարութեան, ծովային և այլ նախարարք իւրաքանչիւրն տարեկան 8,000 տօլար: Միացեալ Նահանգաց երեսփոխանական ժողովոյ ան-

դամոց կը վճարուի տարեկան իւր վարձք 1 միլիոն 695 հազար տօլար, իսկ ծերակոյտի անդամոց վճարուած գումարն է 380 հազար տօլար: Երեսփոխանական ժողովոյ անդամական հրամանին և ծառայութեան ներքէ 400 պաշտօնեայք կան տարեկան 684 հազար տօլար վարձքով որոց պաշտօնն է լսի ծառայութիւն:

— Զօրավար Շէրիան, որոց հիւանդութիւնն ծանուցեր էինք ամոյս ձին մեռաւ Նօնքիթ, ուր փոխադրուած էր վերջերս: Հանգուցելոյ մարմինն երկու օր առաջ Ուաշինկթըն տարուեցաւ, և թաղումն անելի կուէնեայ այս տղերս շարուած ժամանակ:

— Հօրէն Տոնօհու որ երկու տարի առաջ Պրուքլինի կամուրջն իսթ Րիփըր գետի մէջ ցատկեց, երկու օր առաջ Սաւթ-Նիւթըն երկաթուղեաց կամուրջն թափա գետին մէջ ցատկելով խեղձամահ եղած է:

ՀԱՄԱՅՆՆԵՐ

Քաննէքթիքըմ Նահանգին մէջ գտնուող մետաքսի գործարաններն

Թարիֆիլի մէջ կան երկու մետաքսի գործարաններ որք են Հարմֆըրմ Սիլք Քլմբէնի և Թունքնիս Սիլք Քլմբէնի:

Վերհաուս Փոյնթի մէջ 1,500 տօլար Սիլք Քլմբէնի:

Վիլիամսթիքի մէջ, Հօլլեստ Մանրֆաքթըրինկ Քլմբ:

Վինտսօր Հօքսի մէջ, Ալէն Տուայթ:

Վինսթըրի մէջ, Ն. Ե. Սիլք Քլմբ:

Մարլպորուհի մէջ, Սամ Ըշէլըր:

(Շարունակելի)

ՀԱՆՔԼՈՒԻ ԹԻԻ 3

«Արեգակ շաքամած երթ ազգային եւ քաղաքական» Լրագրոյս վերնադիւն կը պարունակէ 15 անսաղ ստաւեր որք են Ա, Բ, Ե, Գ, Կ, Շ, Բ, Թ, Զ, Յ, Ի, Ն, Ի, Ք եւ Ղ: Այս 15 տաւերն միայն գործածելով՝ մեր բաժանորդներէ ու՛ որ՝ առ նաւազն՝ վեց տողերէ բաղկացեալ լուսագոյն ոտանաւորն գրէք, տարեկան մը երկու օրինակ «Արեգակ» նուէր պիտի ստանայ:

Թիւ 1 և 2 հանելուկներու ուղիղ լուծումն ենք ընդունած չենք տակաւին:

Ստացանք Մասիս ամսաթերթի յուլիսի թիւն հետեւեալ պարունակութեամբ:

Ազգային տետուծիւն — Գիտական տետուծիւն — Նշմարք, սէր, սանձանիւք սիրոյ — Քերթուած — Քաղաքական տետուծիւն — Մեր ատեն ներն, կատակերգութիւն:

ՄԱՍԻՍ
ԱՄՍԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂ ԱՔԱԿԱՆ
ԵՒ
ԳԻՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն ամիս սկիզբէն. բաժանորդագրութեան գինն է թէ Պոլսոյ և թէ գաւառաց համար տարեկան մէկ քառորդ ոսկի — ձեռքէ կը ծախուի համար 40 փարայի:

ԱՄԻՍԻ բաժանորդագրուիլ ուղղանձիմը պատկընդ գլխի «Մասիս» ի խմբագրութեան Ղալաթիոյ, Նորատունկեան հանդիսանալու իրաւունքով:

ՆԵՐՍԷՍԻ ԵՒ ԱԼԻՇԱՆԻ

Պատկերներն պատրաստել տուած ենք ընտիր թանձրաքարտի վրայ թէ «ալպիւմ» ի մէջ դրուելու և թէ առանձին չըջանալու պատէն կախելու սովորական մեծութեամբ: Առաջիններու խաւքանշիւրն կարծէ 5 սէնթ, իսկ մեծերու համար 10 սէնթ: Թղթատարի ծախքն մեր վրայ է: Գներն կանխիկ: Տեղական նամա կաղապար կընդունինք:

ՈՌԻՍԱԶԱՅ ԼՐԱԳՐԱՅ ԹԱՅՄԸՆ

ՄՇԱԿ

Կ' ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹԸ 5 ԱՆԳԱՄ

Տարեկան գինն է 10 ռուբլ, կէս տարեանը 6 ռ. Բաժանորդագրուիլ ուզող ամերիկեան Հայք կը բրախրուին դիմել Արեգակի խմբագրութեան՝ անմաք կամ նամակաւ:

“ՄՇԱԿ” ԿԱՐԴԱՅԻՔ

ՏԵՐ — ԽԵՄԻՍ Է. ԻԿՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԼՐԱԳՐԱԿ ԼՐԱԳՐՈՅ

ԱՐԵՎԱԿ
ՇԱԲԱԹԱԹԻՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ —

Ամերիկայի համար տարեկան 2 ու կէս տղար, վեցամեայ 1 ու կէս տղար թուրքից համար տարեկան 2 ու կէս մէքա, վեցամեայ 1 ու կէս մէքա կը լուրջի և այլ երկիրներու համար տարեկան 12 ֆր. , վեցամեայ 7 ֆր. : Դուրս գլխուած Լրագրաց համար ծախքը խմբագրութեան վրայ է: Բաժանորդագրանքն կ'ԱՆԻՍԻ վճարելի են: Չի հրատարակուած նամակէն. Կոչ չի տրուիր: Ծանուցումներ կ'ընդունուին հոյնէն, անգլիացիներէն ու գաղղապէն լեզուներով:

— ԳՐԱԳՐԱԿԱԿՈՒԹԻՒՆ —

Կոտանդանու պօլիս	Պատուարժան վարչութիւն «Արեւելք» ի
Զմիւռնիա	Տ. Յ. Բախրաբեան և վաճան Անտանիան
Իսկնուրս	Տ. Գեղամ Տ. Գրիգորեան
Գաշիք	Տ. Կ. Խաչատր
Մամուր և Տրապիզոն	Տ. Միշլան Գիւրգենեան
Մամուր	Տ. Պետրոս Ուրփալեան
Տիգրանակերտ	Արմ. Տ. Յովհ. Գ. Պապատարեան
Նիւ Եփեսոս	Տ. Յակոբ Իսիկեան
Ճէրբի Սիթի	Տ. Համբարձում Ժամկեան
Ուսթիք	Տ. Ե. Բարսեղեան
Հասցէ	
Պո	